ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/40

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի 14.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 14.03.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել էր հետևյալը.

«Բողոքի առարկան, փաստացի հիմքերը և ապացույցները.

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից արևածաղկի ձեթի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր) սահմանվել է հետևյալը.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ. «Արևածաղկի ձեթ, ռաֆինացված (զտած) (Արևածաղկի ձեթ) Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված) ԳՕՍՏ 1129-2013: Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի,

զտված, հոտազերծված, մինչև 2 լ-նոց պոլիէթիլենային շշերով, ստվարաթղթե արկղերով մինչև 27 կգ-ոց տարողությամբ, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ծանոթություն՝

Արևաձաղկի ձեթի պիտակի և արկղերի վրա դրոշմված լինի՝

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Պահպանման ժամկետը և պայմանները
6. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
7. «Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ» գրառումը
8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
9. Արկղերի վրայի գրառումները մակնանշված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով, նշված ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:
10. Ստվարաթղթե ամուր արկղերով:
11. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
12. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում է:»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնած մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ - 7/21»* ծածկագրով բաց մրցույթի շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը:

Հանձնաժողովի 02.03.2018թ. (հրապարակվել է www.gnumner.am կայքում 12.03.2018թ.) թիվ 4-րդ արձանագրության համաձայն՝ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ թիվ 6.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթության դաշտը, ինչպես նաև բացակայում են պայմանագրի և համաձայնագրի կատարումը հավաստող փաստաթղթերը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին առաջարկելով շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Ընկերությունը ներկայացրել է շտկումները, սակայն չի ներկայացրել հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթության դաշտը: Հանձնաժողովը որոշել է վերոնշյալի կապակցությամբ մերժել «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտը:

Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ միայն մեկ մասնակից է մասնակել գնման ընթացակարգին, որի հայտը մերժվել է:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 12.03.2018թ. հրապարակվել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ արձանագրությունը:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշում-ները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Բողոքի վերլուծությունը և պահանջը.

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից արևածաղկի ձեթի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված Տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ. «Արևածաղկի ձեթ, ռաֆինացված (զտած) (Արևածաղկի ձեթ) Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված) ԳՕՍՏ 1129-2013: Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, մինչև 2 լ-նոց պոլիէթիլենային շշերով, ստվարաթղթե արկղերով մինչև 27 կգ-ոց տարողությամբ, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ծանոթություն՝

Արևածաղկի ձեթի պիտակի և արկղերի վրա դրոշմված լինի՝

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Պահպանման ժամկետը և պայմանները
6. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո

7. «Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ» գրառումը

8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն

9. Արկղերի վրայի գրառումները մակնանշված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով,

նշված ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:

10. Ստվարաթղթե ամուր արկղերով:

11. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:

12. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում է»:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ն, Ընթացակարգի թիվ 4 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարության համաձայն նշել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝

1) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -7/21» ծածկագրով բաց մրցույթի շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը:

Ընկերության կողմից ներկայացվել է թիվ 6.1 հավելվածը, այն է՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Սակայն Հանձնաժողովի 02.03.2018թ. (հրապարակվել է www.gnumner.am կայքում 12.03.2018թ.) թիվ 4-րդ արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ չի ներկայացրել հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթության դաշտը:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 6-րդ մասերով և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2 մասի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները, իսկ այս պարագայում կարելի է արձանագրել, որ Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ Տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները հանդիսանում են պարտադիր պայմաններ և պետք է ներառվեն մասնակցի կողմից ներկայացվող թիվ 6.1 հավելվածում, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրելով անհամապատասխանություն՝ գործել է ոչ իրավաչափ»:

Ելնելով վորոգրյալից՝ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է պարտավորոցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից արևածաղկի ձեթի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 02.03.2018թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված.

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը,

2. «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից 14.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով պայմանավ գնման ընթացակարգը հայտարարվել է 2018-2020թ.թ. ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ արևաածաղկի ձեթի գնման նպատակով:

Հայտերի բացման նիստում արձանագրվել է, որ մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն, որի հայտերը գնահատվել են մրցույթի հրավերին համապատասխանող և սահմանված կարգով՝ որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից, ընկերությունից պահանջվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում պարզվել է, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին շտկել արձանագրված անհամապատաս՛անությունները:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով շտկվել են բոլոր անհամապատասխանությունները, բացառությամբ ապրանքի տեխնիկական բնութագրով սահմանված ծանոթություն բաժնի, ինչն ուղղակի չէր ներառվել ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում:

Վերոգրյալից ելնելով և հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, ընկերության հայտը մերժվել է և ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Հարկ եմ համարում նշել նաև, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտի մերժման արդյունքում չի կնքվել մատակարարման պայմանագիրը, ինչը, հաշվի առնելով նոր մրցույթ

հայտարարելու և մատակարարման պայմանագիր կնքելու համար գնումների ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանված ժամկետները, հանգեցնելու է ՀՀ ԶՈՒ անձնակազմի ապահովման խնդիրներին»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի ՍՊԸ-ի կողմից 14.03.2018թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 09.02.2018թ. հայտերի բացման նիստի N 3 և 02.03.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի 02.03.2018թ. թիվ ԴՎԱ/989 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար արևածաղկի ձեթի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ն Ընթացակարգին ներկայացված հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով

ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովի 09.02.2018թ. նիստի N 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել մեկ մասնակից՝ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն, որի ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 449,289,120 ՀՀ դրամ (գնի առաջարկ ներառյալ ԱԱՀ):

Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը որոշել է Ընկերությանը ճանաչել Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 4.2 կետով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ն, որպես «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով բաց մրցույթի առաջին տեղը զբաղեցրած մասնակից, հայտի թիվ 6.1 հավելվածով՝ ապրանքի ամբողջական նկարագրով, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը:

Հանձնաժողովը 02.03.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ թիվ 6.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթության դաշտը, ինչպես նաև բացակայում են պայմանագրի և համաձայնագրի կատարումը հավաստող փաստաթղթերը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Ընկերությունը ներկայացրել

է շտկումները, սակայն չի ներկայացրել հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթության դաշտը, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ նույն արձանագրության 4.2 կետով հանձնաժողովը որոշել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ հավաստել է իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիրը): Հետևաբար, ըստ բողոքաբերի, «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտի գնահատումը պետք է իրականացվեր բացառապես նշված վավերապայմանների մասով հայտի թիվ 4 հավելվածով ստանձնած պարտավորությունը կատարված լինելու տեսանկյունից, և նշված վավերապայմաններից բացի որևէ այլ՝ մասնավորապես, տեխնիկական բնութագրի «ծանոթություն» բաժնում ներառված տեղեկատվություն ներկայացնելու պարտավորություն Ընկերությունը վերը նշված հավելվածով չի ունեցել:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժելու որոշումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Ընկերությունը իր կողմից ներկայացված հայտի 6.1 հավելվածով՝ ապրանքի ամբողջական նկարագրով չի ներկայացրել հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթության դաշտն, ինչն, ըստ Պատվիրատուի ներկայացուցչի, ապրանքի տեխնիկական բնութագրի անբաժանելի մասն է հանդիսանում և ենթակա էր պարտադիր լրացման:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների

տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք նախատեսված չեն նույն հոդվածով:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

• 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 2-րդ կետի համաձայն՝ հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման

դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են(...):

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն հայտի թիվ 6.1 հավելվածով՝ ապրանքի ամբողջական նկարագրով, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովի կողմից «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն հայտը մերժվել է ապրանքի ամբողջական նկարագրով հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի «ծանոթություն» դաշտը չներկայացրելու հիմնավորմամբ:

Խորհուրդը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերի 4 հավելվածով «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը, ինչը և կատարվել է Ընկերության կողմից, հետևաբար հանձնաժողովը՝ մերժելով «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտը գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի 14.03.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորոցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից արևածաղկի ձեթի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել

02.03.2018թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

3. Պարտավորոցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 02.03.2018թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված՝ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**